

ԿԵԱՆԻ ԵՒ ՄՇԱԿՈՅՔ

ՄԱՐԴԿԱՅԻՆ ԵՐԿՈՒ ՎԱՀԵԲԱԳԻՐԵՐ

Դեկտեմբեր 30-ին, Կըմլում, ուրիշ աղջային պատուիրակութիւնների շար - քին, մի պատուիրակութիւն էլ Հայաստանի կողմից է ներկայացել Ստալինի՝ յայտնելու համար Հայաստան աշխարհի հաւատարմութիւնն ու երախտագիտութիւնը «մեծ առաջնորդին»: Այդ պատուիրակութեան հետ, թէեւ ոչ որպէս անդամ, ներկայացել է եւ բանաստեղծ Նայիրի Զարեանը: Ուրիշները արձակուեն գովեստ հիւսել Ստալինին,

Ն. Զարեանը կարգացել է մի բանաստեղծութիւն, որ իրեւ մարդկային վաւերազիր առաջ ենք բերում ստորեւ: Մի վաւերագիր, որ ընորոշում է ոչ միայն հեղինակին, այլ եւ խորհրդային միջավայրն ու բարձերը եւ, ամենից առաջ, իրեն՝ «մեծ առաջնորդին»: Այդպիսի ներբողականներ միաժամանակ՝ ճամանակ՝ ճանապետներին:

ՍՏԱԼԻՆ

Աֆիլիկին Հոմերն երգեց, Խուստամ-Զալին՝ Ֆիրդուսին:

Ոսկեզօւեց հազար երգով թոնապարսի փառքը սին.

Հազար կայծակ փայլատակեց մրրիկներում արևաներկ

Ու շաղացին գիշերներում հազարաւոր ասուպներ:

Բայց տառապատ մարդու համար չէր նառագել մի արեւ

Մարքսի նման հանաճչափայլ, կնքելով պէս հանճարեղ,

Լիթինի պէս բոցակորով, կենինի պէս լուսայորդ:

Եւ ժեզ նման մեծ ու յստակ, ով պողպատէ առաջնորդ:

Չի խաւարի ծիրանավառ հորիզոնում պատմութեան

Չեր հաննարի արեգնային չորրորդութիւնը տիտան.

Նա յաւիտեան կը ծաւալի արեւելից արեւմուտ

Եւ կըպատով եզօր լոյսով ապազայի քողը մուր:

Հազար Հոմեր ու Ֆիրդուսի կառնեն զրիչ ու ժնար

Ու երգելով չեն սպառի ձեր մեծութիւնն աներնար,

Կերգեն բռլոր լեզուներով բանաստեղծներ նորանոր,

Կըտան դարերը ձեզ վայել յուշարածներ փառաւոր:

Խակ ես - զինուրդ կենինեան, խակ ես մի հայ բանաստեղծ -

Բերում եմ ժեզ ժողովրդիս երախտապարտ միրտը մեծ,

Երգում եմ ժեզ, մեծ Ստալին, դու հարազատ ամենին,

Դու ազգերի երջանկութեան նարսարագէտ ու դարբին:

Կանգնած էր նա, իմ ժողովուրդն, ամենան վիհի եղերքին,

իր համեարի հազարամեայ գոհարներով քանիկագին։
 Կանգնած էր նա անդունի մօս անօգնական ու հիւծւած,
 Արիւնակից եւ այլազգի ոսոյններից հալածւած։
 Մահւան կարմիր մըրիկների ամենակուլ բերանում
 Նա յօշոտւած բազուկներով ելք էր մի նոր որոնում։
 Ազատարար Հոկտեմբերի բայլերն այնժամ քնդացին,
 Հնչեց քո ճայնը լենինեան, Լենինի հետ միասին։
 Դուք փրկութեան լոյս նետեցիք ժողովրդին իմ չռքած,
 Դուրս կոչեցիք շիրմից խաւար դէպի կեանքի դուռը բաց։
 Նա վեր կացաւ գօտեպնդւած, ուստեց քափով ահազին
 Ու միացաւ կումունիզմի աշխարհաերթ բանակին։
 Մեռաւ Լենինն ու մարդկութեան սիրութ մի պահ դադարեց,
 Ու շողացիք հօրինում դուք որպէս նոր մի արեւ։
 Նախորդներիդ հզօր լոյսով եւ քո լոյսով սեփական
 Տանում ես դու երկիրն ահա դէպի չքնաղ ապացան։
 Անունըդ խոր երգի նման մարդկանց հոգին ողողում,
 Թեւ է տալիս եւ իհասքանչ հերոսութեան է մզում։
 Եւ մեր չքնաղ Հայաստանի ծաղկածիծաղ լեռներում
 իր նոր աշխարհն է կառուցում քեզով լցւած մի սերունդ։
 Եւ ես – նրա ծոցից ելած մի խանդակառ բանաստեղծ –
 Բերում եմ քեզ մի երջանիկ ժողովրդի սերը մեծ։
 Երգում եմ քեզ, մեծ Ստալին, դու հարազատ ամենքին,
 Դու մարդկային երջանկութեան նարտարապետ ու դարրին։

Իմ երջանիկ ժողովրդի մեծ սէրն եմ ժողովուրդների երջանկութեան իմժի-
 մատուցում քեզ, ընկեր Ստալին, երգե-
 լով քեզ, մեծ առաջնորդ։ Այդ դո՛ւ ես

Երկրորդ վաւերագիրը նոյն Նայիրի
 Զարեանի մի ուրիշ բանաստեղծութիւնն
 է, գրւած 15 տարեւ առաջ, երբ բոլցե-
 ւիկները հիւսիսից եւ քէմալական թիւր-
 քերը հարաւից յարձակւէլ էին Հայաս-
 տանի վրա եւ Քեազիմ Կարարէքիրի
 բանակը մօտենալով Կարսին՝ խուճապի
 էր մատնել հայկական զօրքերը։ Այդ

օրերին էր, որ հերոսական մահով իր
 կեանքին վերջ տւաւ Գնդ։ Մաղմանեա-
 նը եւ ներշնչեց Ն. Զարեանին գրելու
 հետեւեալ բանաստեղծութիւնը, որ
 նոյնպէս առաջ ենք բերում ամբողջու -
 թեամբ։ Խորհրդածութիւնները թողնե-
 լով ընթերցողին։

ԳՆԴԱՊԵՏ ՄԱԶՄԱՆԵԱՆԸ

(Կարսի ամկման առքիւ)

Այս պատմութիւնը ամօրակիզ բերնէ բերան է գալարւում,
 Եւ ինչպէս օճ բիւրածանիք հոգիներն է մեր խայրում։

Նրանք եկան, խոմըւեցան մեր ամառիկ դիրքերի տակ,
 Ունում էին դիրքերն ի վեր զերք գայլերի սոված վոհմակ,

Գնդապիտը մե ժաշարի նշան տոեց վերջին կուի,
ինչպէս մի հօս հեզ ոչխարի մերինները կարկամեցին:
Սովալլուկ գայլերի պէս նրանք սողում էին դէպ մեզ.
Գնդապիտը երեք անգամ աղաղակեց կուի նշան,
երեք անգամ «յառա՛շ» ձայնեց ու սլացաւ սուսերամերկ,
երեք անգամ դիրքերն ի վեր նա պաղատեց կուի հրաւէր . . .
Մերոնք, ասես, շշմած էին ինչպէս հօտը հեզ ոչխարի, -
Զկրուեցին, չզոռացին իրացանները հազար-լեզու,
Զխոսեցին զմդացիթներ - իրակուոր իբռևորներ.
Մինչ զագազած գայլերի պէս նրանք սողում էին դէպ մեզ,
Մերինները կորասրւին, բիւրակը նամակ խումապիցին:
Նրը որ խունապը նա տեսաւ ոչխարայսում իր գօրքերի,
Երբ ամօրը սեւ ամպի պէս նստեց նրա նակտի վրա, -
Իր դիակը սրւինամերք թշնամիի առջեւ փոեց . . .
Խոկ զինորները դասալիք, մեր զինորները խումապող
Հաւաքեցին միջնարերդում իրենց վայոը ամօրալի,
Խունեցին իրարու մօս զերք գայլ տեսած ոչխարի հօս,
Լեարդերի պէս իրենց ներմակ բարձրացուցին մի դրօշակ, . . .
Այս պատմութիւնն ամօրակեզ սրտերից-սիրս է գալաւում,
Եւ ամօրը բիւրակը նակատներն է մայլում:
Այս պատմութիւնն է գալարում մայրերի վրա, դահլիճներում,
Պատմը սում է հազար լեզու, չարագուշակ ինչպէս բուհու,
Դիշերում է եւ իմ հոգում անկայծում է դէմքը նըրա -
Սուսերամերկ, հերոսատիպ, հերոսամակ զմդապետի:
Մերկացած սուրը նըրա փայլատակում է իմ հոգում
Եւ ամօրի մուրը սաղցէ շամբի նման ակօսում է:
Դեռ իմ հոգում վարսնել են մերինները սկիմահակ,
Դեռ իմ հոգում որոտում է նրա ձայնը ռազմահրաւէր.
Դեռ իմ հոգում հազար-կոնակ խումապում է հօտը նրանց.
Դեռ իմ հոգում նա կանչում է, աղաչում է դիրքերն ի վեր:
Նախառինքը հազար լեզու ու կշումբամեքը բիւրաչափ
Հալրած զլուխը Մասիսի նա տեսնում է դեռ իմ հոգում:
Նա տեսնում է եւրոպայի արհամարհանքը սառոյցէ,
Հայրենիքը խաչած կարապ ու բիւր յոյսեր սին ու պարապ,
Հրդեն, աւեր ու կոտորած, սով, հեծեծանք, համատարած
Մէկ գայրեկեանում հազար անգամ նա նա տեսնում է դեռ իմ հոգում . . .
Նըրա աշքերն են այրբում աղերսական, ազնւարոց,
Նըրա մակառն է մքազնում սեւ ամօրից դեռ իմ հոգում,
Դեռ շամբի պէս աստածամերկ նըրա սուրն է փայլատակում,
Դեռ իմ հոգում կարկաչում է սուրը վտակը նըրա կրծքից . . .
Նըրա մահը վառում է դեռ հերոսուրեան գերք սուրը պատկեր,
Դեռ իմ հոգում նա մենում է, կարկաչում է ու նառագում:
Այս պատմութիւնն ամօրակեզ ամսանում է բիւր սրտերում,
Մքին ամպում շամբի նման նըրա մահն է փայլատակում . . .

ՆԱՅԻՐԻ ԶԱՐԵԱՆ